

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ, ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՄԲԻՈՆ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Երևան 2016

**Հովհաննիսյան Ա.Ա./**Բակալավրի ավարտական աշխատանք կատարելու  
մեթոդական ուղեցույց., Եր. 2016թ, 21 էջ

Մեթոդական ուղեցույցը նախատեսված է ավարտական աշխատանք  
կատարող ուսանողների, ինչպես նաև նրանց ղեկավարների համար:

Ուղեցույցում մանրամասնորեն նշված են բոլոր քայլերը, որոնք  
անհրաժեշտ են ըստ պահանջի ավարտական աշխատանք ներկայացնելու  
համար, ինչպես նաև ավարտական աշխատանք կատարողի և ղեկավարի  
հիմնական պարտականությունները:

Հաստատված է Էկոնոմիկայի,  
Իրավունքի և կառավարման  
ամբիոնի N 10 Նիստում  
27.05.2016թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	4
2. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹԵՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ.....	5
3. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ, ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ, ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ, ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ.....	6
4. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....	6
5. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ.....	10
6. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	14
7. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՐԱԽՈՍՈՒՄԸ.....	15
8. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	16
ՀԱՎԵԼՎԱԾ 1.....	19
ՀԱՎԵԼՎԱԾ 2.....	20
ՀԱՎԵԼՎԱԾ 3.....	21
ՀԱՎԵԼՎԱԾ 4.....	22

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ավարտական աշխատանքը հանդիսանում է ուսանողի պրոֆեսիոնալ պատրաստվածության ուղղություններից որևէ մեկով ավարտական որակավորման աշխատանք, որն ունի ներքին միասնականություն և արտացոլում է ընտրված թեմայի ելքն ու արդյունքները: Աշխատանքի առարկան պետք է լինի ուսանողի պրոֆեսիոնալ պատրաստվածության ուղղության հայեցակարգային խնդիրներից մեկը. այն գրվում է հեղինակի մասնագիտացման ուղղություններից որևէ մեկի թեմայով: Աշխատանքը պետք է ունենա հետազոտական բնույթ, համապատասխանի գիտության զարգացման ժամանակակից մակարդակին, իսկ թեման լինի արդիական՝ առաջին հերթին ապագա պրոֆեսիոնալ գործունեության համար:

Ավարտական աշխատանքը պետք է ներկայացվի այն տեսքով, որը թույլ կտա դատել, թե որքան ամբողջական են արտացոլված և հիմնավորված նրանում պարունակվող դրույթները, եզրակացությունները և առաջարկությունները, որն է նրանց նորույթն ու նշանակությունը: Ավարտական աշխատանքի բովանդակությունը կենտրոնացնում է ինչպես հետազոտությունների ելքային, այնպես էլ նրա բոլոր քայլերն ու ստացված տվյալները, ընդ որում՝ աշխատանքում ոչ միայն ուղղակի նկարագրվում են փաստեր, այլև անցկացվում է վերջիններիս բազմակողմանի վերլուծություն, դիտարկվում են նրանց գոյության հատուկ իրավիճակներ, քննարկվում են գոյություն ունեցող այլընտրանքները:

Ավարտական աշխատանքի պատրաստումը կազմված է մի քանի փուլերից.

1. Թեմայի ընտրություն և դրա արդիականության հիմնավորում,
2. Գրականության ցանկի կազմում, անհրաժեշտ տեխնիկական և նորմատիվային փաստաթղթերի և այլ աղբյուրների հետ ծանոթացում, որոնք վերաբերում են ավարտական աշխատանքի թեմային,
3. Ավարտական աշխատանքի համար անհրաժեշտ նյութերի հավաքում,

4. Ստացված տվյալների մշակում և վերլուծություն՝ ժամանակակից հետազոտությունների մեթոդների, տեխնիկական միջոցների և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ,
5. Եզրակացությունների ձևավորում և առաջարկությունների մշակում,
6. Սահմանված պահանջներին համապատասխան ավարտական աշխատանքի ձևավորում:

Ավարտական աշխատանք կատարողը լիիրավ պատասխանատվություն է կրում անցկացված հետազոտության ինքնուրույնության և արդյունքների իսկության համար:

## **2. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹԵՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ**

Ուսանողներին տրվում է ավարտական աշխատանքի թեմայի ընտրության իրավունք: Այն իրականացվում է՝ ելնելով խնդրի նկատմամբ հետաքրքրությունից, փաստացի արդյունքներ ստանալու հնարավորությունից, ինչպես նաև հատուկ գրականության առկայությունից: Ուսանողը կարող է առաջարկել ավարտական աշխատանքի իր թեման (եթե այն համապատասխանում է մասնագիտությանն ու մասնագիտացմանը, որը նա սովորել է) ու համաձայնեցնել այն սահմանված ժամկետներում ամբիոնի ղեկավարության հետ: Այն դեպքում, երբ ուսանողը սահմանված ժամկետներում չի նշում ավարտական աշխատանքի թեման, ապա թեման նշանակվում է տվյալ մասնագիտության ամբիոնի կողմից:

Ավարտական աշխատանքի ղեկավարը նշանակվում է ամբիոնի պրոֆեսորների, դոցենտների, դասավանդողների կազմից: ՃՇՀԱՀ ղեկավարության հետ համաձայնեցումից հետո կարելի է նշանակել ավարտական աշխատանքի որոշակի հարցերի գծով խորհրդատու:

Ավարտական աշխատանք կատարողների ազգանունները, ավարտական աշխատանքի թեմաները, ղեկավարների ազգանունները հաստատվում են ամբիոնի նիստի ժամանակ:

**3. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ, ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ, ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ**

Նախևառաջ անհրաժեշտ է ճշտել ընտրված թեմայի վերաբերյալ կոնկրետ տվյալների ստացման հնարավորությունը, ինչպես նաև ելքային տվյալների առկայությունը, քանի որ ավարտական աշխատանքի պլանը կազմելուց առաջ պետք է հստակ պատկերացնել ամբողջ տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է և բավարար ավարտական աշխատանքը կատարելու համար:

Ավարտական աշխատանքի պլանը կազմելուց առաջ ուսանողը պետք է որոշի հետազոտման առարկան, պարզի նրան հետաքրքրող հարցերի դիտարկումն ավարտական աշխատանքի թեմայի ամբողջ խորությամբ:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ուսանողը պետք է ցուցադրի տվյալների ընտրման և խմբավորման անցկացման, աղյուսակների կազմման, մաթեմատիկավիճակագրական և այլ մեթոդների կիրառման ունակությունները, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման կարողությունները, մասնավորապես՝ համակարգիչ և ինտերնետ:

Այնուհետև անհրաժեշտ է սահմանել դիտարկվող նյութի սահմանները ժամանակում և տարածության մեջ, ցույց տալ ուսումնասիրվող երևույթի զարգացումը: Ժամանակակից վիճակն ուսումնասիրելուց առաջ նպատակահարմար է փոքրիկ պատմական էքսկուրսիա անցկացնել և կրճատ շարադրել ուսումնասիրվող երևույթի զարգացումը:

**4. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ավարտական աշխատանքը կազմված է հետևյալ մասերից.

1. Տիտղոսային թերթ,
2. Բովանդակություն

- Ներածություն
  - Հիմնական մաս (երկու-երեք գլուխ, յուրաքանչյուրը բաղկացած երկուսից չորս ենթագլուխներից)
  - Եզրակացություն և առաջարկություն
3. Օգտագործված գրականության ցանկ
  4. Հավելվածներ (անհրաժեշտության դեպքում)

Ավարտական աշխատանքի ծավալը, որպես օրենք, կազմում է WORD ֆորմատով համակարգչով հավաքված առնվազն 60 էջանոց տեքստ (չհաշված հավելվածները): Յուրաքանչյուր ենթագլխի ծավալը պետք է լինի առնվազն 10-12 էջ:

Հավելվածների քանակը չի սահմանափակվում:

Ավարտական աշխատանքի **տիտղոսասային էջը** ծառայում է տեղեկատվության աղբյուր, որն անհրաժեշտ է աշխատանքի մշակման և փնտրման համար: Այն իր մեջ պարունակում է ուսումնական հաստատության լրիվ անվանումը, հեղինակի անունը, ազգանունը և հայրանունը, ավարտական աշխատանքի թեման, նրա տեսակը (ԱՎԱՐՏԱՎԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ), աշխատանքի ղեկավարի գիտական աստիճանը, կոչումը, ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը, ավարտական աշխատանքի կատարման վայրի և ամսաթվի մասին տեղեկություն:

**Ներածությունը** հաճախ իր մեջ ներառում է ընտրված թեմայի արդիականության հիմնավորումը, նպատակը, խնդիրները և դրված խնդիրների բովանդակությունը, ձևավորում է հետազոտության առարկան, տեղեկացնում է՝ ինչու՞մն է կայանում ստացված տվյալների կիրառական արժեքն ու նշանակությունը: Ներածության մեջ անհրաժեշտ է նշել նաև տեղեկատվական բազան, բնութագրել էլքային վիճակագրական և այլ տեղեկատվությունը: Նպատակահարմար է կանգ առնել հետազոտության մեթոդների վրա՝ նշելով, թե ինչ կոնկրետ մեթոդներ են կիրառվել, ինչպես է անցկացվել նյութերի մշակումը, ինչպես է արտահայտված անհատական մասնակցությունը (ընտրական հետազոտության մշակում (եթե այն անցկացվել է), հետազոտության նախապատրաստում, հաշվետու

տվյալների հավաքագրում, վիճակագրական և այլ տվյալների մշակում, հետազոտության արդյունքների գնահատում և այլն):

Ներածության ծավալը պետք է լինի մինչև 3 էջ:

**Առաջին գլուխը**, որպես օրենք, կրում է տեսական և մեթոդական բնույթ: Այստեղ կարելի է տալ խնդրի պատմությունը, համապատասխան գրականության (հայաստանյան և արտասահմանյան) հիման վրա ցույց տալ նրա հետազոտման մակարդակը:

Առաջին գլխում պետք է բացահայտվեն ուսումնասիրվող երևույթի կամ գործընթացի հասկացություններն ու էությունը, ճշտվեն ձևակերպումները:

Ուսումնասիրվող խնդրի և երևույթի զարգացման դինամիկայի նկարագրումը պետք է պարզաբանվեն տեղեկատու և լայնածավալ տվյալներով, աղյուսակներով և այլ նյութերով, որոնք գլխավորապես պետք է կատարվեն ինքնուրույն: Առանձին դեպքերում կարելի է գրական աղբյուրներից ներմուծել որոշ աղյուսակներ՝ պարտադիր հղում կատարելով սկզբնաղբյուրին: Աղյուսակների հետ մեկտեղ անհրաժեշտ է կիրառել գծապատկերներ, որոնք աղյուսակների նկատմամբ ունեն կոնկրետ առավելություններ, քանի որ թույլ են տալիս ավելի պատկերավոր ներկայացնել այն, ինչն ունի էական նշանակություն՝ այդպիսով թեթևացնելով նյութի ընկալումը:

Իր ծավալով առաջին գլուխը չպետք է գերազանցի ամբողջ աշխատանքի 30%-ը:

**Երկրորդ և հաջորդ գլուխներն** ավարտական աշխատանքի հիմնական մասերն են: Նրանց բովանդակությունը կրում է պրակտիկ (գործնական) բնույթ և հիմնականում պետք է ներկայացնի ուսումնասիրվող երևույթի վերլուծություն՝ նյութերի հարուստ պահեստից, որի մասին ուսանողը պետք է տեղեկացված լինի համալսարանում անցած դասերից:

Ավարտական աշխատանքի տեքստում պարտադիր չէ բերել աղյուսակներ և նկարագրել մեթոդներ, որոնք պարունակում է մասնագիտական գրականությունը: Օգտագործված գրականության վրա հղումը պարտադիր է:

Ավարտական աշխատանք կատարող ուսանողը աշխատանքում առկայության դեպքում պարտադիր պետք է նշի արտասահմանյան փորձի



մասին: Մասնավորապես՝ ինչ գործողություններ են կատարվել տվյալ խնդրի կամ երևույթի բացահայտման համար, ինչ մեթոդներով, ձևերով է լուծում տրվել տվյալ խնդրին/երևույթին, ինչ արդյունքի են հասել, որն է տվյալ մոտեցման առավելությունը, թերությունը: Կատարել համեմատական վերլուծություն:

Բոլոր հաշվարկները, որոնք կատարվել են հաշվողական տեխնիկայի կիրառմամբ, անհրաժեշտ է ներկայացնել հավելվածում:

Ավարտական աշխատանքի այս մասի ծավալը կազմում է ընդհանուրի 50-60%-ը:

**Եզրակացությունը** պետք է պարունակի ընդհանուր եզրակացություններ, հիմնական խնդիրների ընդհանրացված շարադրում, ավարտական աշխատանքում ներկայացված խնդիրների լուծման տեսանկյունից աշխատանքի հեղինակային գնահատում կամ ունենա խնդրի լուծման օպտիմալ տարբերակներ, որոնց ներդրումը կնպաստի ընդհանուր արդյունավետության բարձրացմանը; Կարող են ներկայացվել նաև թեմայի հետագա մշակման հեռանկարները:

Եզրակացությունից հետո տրվում է օգտագործված գրականության ցանկը:

**Օգտագործված գրականության ցանկն** իր մեջ ներառում է նորմատիվաիրավական ակտեր, հատուկ գիտական և ուսումնական գրականություն, այլ օգտագործված նյութեր: Այս ամենը պետք է կազմակերպված լինի օգտագործված գրականության ցանկի ներկայացման միասնական պահանջներին համապատասխան: Նորմատիվաիրավական ակտերը դասավորվում են համապատասխան իրենց հիերարխիկ պատկանելիության: Հատուկ գիտական և ուսումնական գրականությունը ձևավորվում է այբբենական կարգով:

Հոդվածների նշման դեպքում պարտադիր նշվում է հանդեսը կամ ամսագիրը, որում տպագրվել են, ինչպես նաև տարին, համարը և էջը: Գրականության ցանկը, որպես օրենք, ներառում է առնվազն 10-30 աղբյուր: Հավելվածը տեղադրում են օգտագործված նորմատիվաիրավական ակտերի և գրականության ցանկից հետո՝ ըստ տեքստում իրենց հիշատակման կարգի: Ցուրաքանչյուր հավելված անհրաժեշտ է սկսել նոր էջից, որի վերջին

աջ անկյունում գրվում է «Հավելված» և համարը նշված արաբական թվերով առանց համարակալման նշանի՝ №:

## 5. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Ավարտական աշխատանքի վերջնական տարբերակը ղեկավարի հետ համաձայնեցումից հետո, աշխատանքը կոկիկ և ճիշտ ձևով վերատպում են, կազմավորում կոշտ կազմով:

Տեքստին և էջերի ձևավորմանը ներկայացվող պահանջներն են.

- A4 (210x297 մմ) չափի թղթի մի կողմի վրա, համակարգչով Microsoft Word ծրագրով,
- Տառատեսակը՝ հայերենի համար՝ GHEA Grapalat, այլ լեզուների համար՝ Unicode), յուրաքանչյուր էջում 28-30 տող:
- Տառաչափ՝ 12:
- Էջերի լուսանցքներ՝ ձախից՝ 30 մմ, վերևից՝ 20 մմ, աջից՝ 10 մմ, ներքևից՝ 25 մմ:
- Յուրաքանչյուր տող սկսել 10մմ խորքից: Տողարանքը՝ 1.5:
- Յուցադրական նյութերը պետք է լինեն պարզ, հասկանալի, սակայն հարուստ այնպես, որ միանգամից գրավեն: Չպետք է ուղղակիորեն արտատպված լինեն ավարտական աշխատանքից:

Ավարտական աշխատանքի բոլոր էջերը պարտադիր պետք է համարակալված լինեն: Էջերի համարակալումը սկսվում է երրորդ և ավարտվում վերջին էջով: Երրորդ էջում գրվում է «3» թիվը: Էջերի համարակալումը կատարվում է էջի ստորին աջ անկյունում:

Տիտղոսային թերթը տրամադրվում է ամբիոնի կողմից և ի տարբերություն ավարտական աշխատանքի մնացած էջերի՝ տիտղոսային թերթը բաղկացած է մեկ, սակայն երկկողմանի տպագրված էջերից:

Աշխատանքի յուրաքանչյուր մաս՝ բովանդակություն, ներածություն, գլուխներ, եզրակացություն, օգտագործված գրականության ցանկ, հավելվածներ սկսել նոր էջից, մգեցված, բոլորը մեծատառերով, ավելի մեծ

տառատեսակով (14) և տողի մեջտեղից: Ենթագլուխներին ներկայացվող պահանջներն են՝ 14 տառատեսակ, մզեցված, նոր տողից, կենտրոնից, սակայն ենթագլխի միայն առաջին տառն է սկսվում մեծատառով:

Յուրաքանչյուր նոր միտք սկսել նոր պարբերությունից՝ համապատասխան վերոնշյալ պահանջների:

Ավարտական աշխատանքում չպետք է լինեն չափից շատ հղումներ: Հղումը կիրառվում է որպես պատճառաբանման գործիք:

Անհրաժեշտության դեպքում կարելի է այլոց մտքերը շարադրել սեփական բառերով, սակայն այս դեպքում ևս սկզբնաղբյուրի վրա հղումը պարտադիր է:

Հղումը կարող է կատարվել կրճատ կամ մանրամասն:

Սկզբնաղբյուրի վրա հղումը կատարվում էջի վերջում տողից ներքև հղումից հետո կամ այլոց մտքի շարադրումից հետո նույն էջում: Մանրամասն հղման ժամանակ նշվում է հեղինակի ազգանունը, անվան, հայրանվան սկզբնատառերը, աշխատանքի անվանումը, հրատարակությունը, հրատարակման վայրը և տարին, էջը:

Կրճատ հղման ժամանակ այն կատարվում է հղումից կամ մտքի շարադրումից անմիջապես հետո փակագծերում նշելով օգտագործված աղբյուրի թիվը գրականության ցանկից և էջերը (օրինակ [3, էջ 76]), իսկ էլքային տվյալների մանրամասն նկարագրումը կատարվում է ավարտական աշխատանքի վերջում օգտագործված գրականության ցանկում:

Ցանկի համարակալումը տեքստում կատարվում է հերթականությամբ: Աղբյուրի առաջին հիշատակման ժամանակ տվյալները տրվում են ամբողջական ծավալով: Եթե նույն աղբյուրը հղում է կատարվում երկրորդ և հաջորդ անգամներ, ապա տրվում է նրա միայն կարճ նկարագրումը:

Ցանկում աղբյուրները պետք է ընդգրկեն՝ հեղինակի/ների/ ազգանունը և անվան առաջին տառը, նյութերի լրիվ անվանումը, հրատարակության տվյալները /տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջերը/: Տեղեկատվական պաշտոնական, այդ թվում՝ էլեկտրոնային աղբյուրների, համակարգչային ծրագրերի, հաշվետվու-

թյունների, հրահանգների, հեղինակային իրավունքի արտոնագրերի, պատենտների դեպքում ներկայացվում են լրիվ տվյալները:

Ստորև ներկայացված են օգտագործված գրականության ցանկում աղբյուրները ճիշտ ձևավորելու կարգը:

### **Օրինակ 1. (Դասագիրք, գիրք, ուսումնական ձեռնարկ)**

Հովհաննիսյան Ա. Ա. / Մենեջմենթի հիմունքներ. – Միսմա ՄՊԸ, Եր.: Հեղ. հրատ., 2015. - 616 էջ

### **Օրինակ 2. (Հոդված)**

Անդրեասյան Ն. Որոշումների կայացման առանձնահատկությունները ֆինանսական ռիսկերի կառավարման ոլորտում/ Ֆինանսներ և էկոնոմիկա հանդես. 2016. № 3-4 (187-188), 14-17 էջ

### **Օրինակ 3. (Նորմատիվային, օրենսդրական ակտեր)**

ՀՀ օրենքը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», ընդունված 2011 թվականի նոյեմբերի 6-ին / № 6.1

### **Օրինակ 4. (Էլեկտրոնային հղում)**

Մշտական բնակչության թվաքանակի փոփոխության բաղադրիչները 2001 և 2011թթ. մարդահամարների միջակայքային տարիների՝ 2002-2010թթ. ընթացքում. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն [Էլեկտրոնային ռեսուրս] URL: <http://armstat.am/am/?nid=389>

Աղբյուրները բերվում են բնօրինակի լեզվով:

Ավելի պատկերավոր լինելու համար աշխատանքում անպայման պետք է ներառված լինեն աղյուսակներ և գծապատկերներ: Աղյուսակները, որոնք զբաղեցնում են ավելի քան մեկ էջ, տեղադրվում են հավելվածում: Գծապատկերները կատարվում են հստակ, գեղեցիկ, ցանկալի է գունավոր՝ խիստ համապատասխանելով գործնական փաստաթղթավորման պահանջներին: Նպատակահարմար չէ բոլոր աղյուսակներն ու գծապատկերները տեղադրել հավելվածում:

Աղյուսակների և գծապատկերների համարակալումը պետք է լինի հերթականությամբ՝ յուրաքանչյուրի համար առանձին: «Աղյուսակ» բառը և նրա հերթական համարը գրվում է աղյուսակի վերին աջ անկյունում (11 տառաչափով, մզեցված) (առանց № նշանի), այնուհետև տրվում է աղյուսակի անվանումը (11 տառաչափ, առանց մզեցվածության):

Աղյուսակի վրա հղում կատարելու ժամանակ անհրաժեշտ է նշել աղյուսակի համարն ու էջը, որում այն գտնվում է:

Եթե աղյուսակը վերցված է որևէ գրականությունից կամ տնտեսական որևէ պարբերականից, ապա սկզբնաղբյուրի վրա հղումը պարտադիր է:

Գծապատկերները չպետք է զբաղեցնեն էջի կեսից ավելին: Նկարների դեպքում դրանք պետք է լինեն հստակ, որպեսզի դիտողը կարողանա հասկանալ: Գծապատկերների համարակալումը հերթականությամբ, կարելի է ըստ գլուխների: «Գծապատկեր» բառը և նրա հերթական համարը գրվում են գծապատկերից ներքև մեջտեղում՝ մզեցված և 11 տառաչափով: Գծապատկերի բացատրությունը տրվում է նույն 11 տառաչափով, սակայն առանց մզեցվածության:

Տեքստում հաշվարկների բանաձևերը անհրաժեշտ է առանձնացնել առանձին տողով և մզեցնել, յուրաքանչյուր սիմվոլի տալով իր նշանակությունը (եթե առաջին անգամ է հանդիպում): Խորհուրդ է տրվում բանաձևերը համարակալել ըստ գլուխների, հատկապես, եթե տեքստում անհրաժեշտություն է առաջանալու նրանց հղում կատարել:

Ավարտական աշխատանքում նյութը պետք է շարադրել հստակ, պարզ, կիրառել գիտական տերմինաբանություն՝ խուսափելով կրկնություններից և հայտնի դրույթներից, որոնք առկա են ուսումնական ձեռնարկներում և դասագրքերում: Բացատրել պետք է միայն քիչ հայտնի կամ տարակարծիք հասկացությունները՝ հղում կատարելով այն հեղինակներին, որոնք տարբեր կարծիքներ են արտահայտել միևնույն հարցի վերաբերյալ:

Օգտագործված գրականության ցանկում պետք է ներառված լինեն բոլոր այն գիտական, նորմատիվային, ուսումնական աղբյուրները, որոնցից օգտվել է ուսանողն աշխատանքը կատարելու ժամանակ:

Ավարտական աշխատանքը կազմավորելուց պետք է հաշվի առնել, որ նրանում չպետք է լինեն ազատ ու դատարկ էջեր:

## 6. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ԵՎ ՆՐԱ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ավարտող ուսանողին ավարտական աշխատանքի պատրաստման և գրելու ընթացքում տեսական և պրակտիկ օգնություն ցուցաբերելու նպատակով նշանակվում է աշխատանքի ղեկավար:

Ուսանողը պարբերաբար (երկկողմանի պայմանավորվածության համաձայն) տեղեկացնում է ղեկավարին ավարտական աշխատանքի պատրաստվելու քայլերի մասին, իսկ ղեկավարը խորհրդատվություն տրամադրում դժվարություն առաջացրած հարցերի վերաբերյալ:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ավարտական աշխատանքի ղեկավարը չի հանդիսանում ավարտական աշխատանքի ո՞չ համահեղինակը, ո՞չ էլ խմբագիրը, և ուսանողը չպետք է հույսեր կապի ղեկավարի կողմից ավարտական աշխատանքում եղած տեսական, մեթոդական, ոճային և այլ սխալները ուղղելու հետ:

Ավարտական աշխատանքի պատրաստման և կատարման տարբեր փուլերում աշխատանքի ղեկավարի առաջադրանքները փոխվում են:

Ավարտական աշխատանքի պատրաստման առաջին փուլում ղեկավարը խորհրդատվություն է անկացնում թեմայի ընտրության վերաբերյալ, դիտարկում և կարգավորում է աշխատանքային պլանն ու տալիս գրականության ցանկի վերաբերյալ առաջարկություններ:

Աշխատանքի կատարման ժամանակ ղեկավարը դառնում է ընդդիմախոս՝ ցույց տալով ավարտական աշխատանքում պատճառաբանությունների, շարադրման, ոճի և այլնի թերություններն ու վերջիններս ավելի լավ շտկելու համար առաջարկում տարբերակներ:

Ավարտական աշխատանքի ղեկավարի առաջարկություններին ու նկատողություններին ուսանողը պետք է քննադատաբար մոտենա: Նա կարող է հաշվի առնել դրանք կամ անտեսել իր հայեցողությամբ, քանի որ թեմայի տեսական և մեթոդական ճիշտ մշակման ու լուսաբանման, ավարտական աշխատանքի բովանդակության և ձևավորման որակի համար լիիրավ պատասխանատվություն է կրում ավարտական աշխատանք կատարող ուսանողը:

Ավարտված աշխատանքը պաշտպանողի ստորագրությամբ աշխատանքի ղեկավարին է տրվում ավարտական աշխատանքի հանձնման սահմանված ժամկետից ոչ ուշ քան 5 օր առաջ:

## **7. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՐԱԽՈՍՈՒՄԸ**

Ավարտական աշխատանք կատարողի աշխատանքի վերաբերյալ լրացուցիչ օբյեկտիվ գնահատական տալու համար համապատասխան ոլորտի մասնագետների կողմից անցկացվում է ավարտական աշխատանքի գրախոսում:

Գրախոսողներ կարող են լինել պետական մարմնի աշխատողները, բիզնեսի, արտադրության տվյալ ոլորտի մասնագետները, ինչպես նաև այլ համալսարաններից և գիտական հաստատություններից պրոֆեսորներ և դասախոսներ:

Գրախոսման մեջ պետք է նշվեն տվյալ թեմայի ուսումնասիրման նշանակությունը, արդիականությունը և այն, թե ինչ հաջողությամբ է ավարտական ուսանողը կատարել տեսական և պրակտիկ խնդիրների դիտարկումը: Այստեղ բաց կարգով տրվում է ավարտական աշխատանքի յուրաքանչյուր մասի վերաբերյալ բնութագիր ու առանձնացվում դրական կողմերն ու թերությունները: Եզրակացության մեջ գրախոսողը իր տեսակետն է հայտնում ավարտական աշխատանքի ընդհանուր մակարդակի վերաբերյալ և նշում գնահատական, որը հետագայում քննական հանձնաժողովի կողմից դրվելու է քննարկման: Գրախոսման դրական գնահատականի դեպքում ավարտական աշխատանքը թույլատրվում է պաշտպանության:

Գրախոսողի կողմից ստորագրված գրախոսությունն ավարտական աշխատանքի հետ միասին քննական հանձնաժողով է ներկայացվում սահմանված ժամկետներում:

Այն դեպքում, երբ ղեկավարը կամ գրախոսողը, ելնելով ավարտական աշխատանքի բովանդակությունից, հանարավոր չեն համարում ուսանողի պաշտպանությունը քննական հանձնաժողովի առջև, ապա այդ հարցը

դիտարկվում է համալսարանի ներսում ավարտական աշխատանքի ղեկավարի և կատարողի մասնակցությամբ:

## **8. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ավարտական աշխատանքի պաշտպանությունը տեղի է ունենում քննական հանձնաժողովի բաց նիստում, որին կարող են մասնակցել նաև ցանկացողները: Վերջիններս պետք է բանավոր թույլտվություն ստանան հանձնաժողովի նախագահի և նրա անդամների կողմից, պարտավորվեն պահպանել լռություն, չխանգարել պաշտպանությունը և հարցերն ուղղել միայն սահմանված դեպքում:

Քննական հանձնաժողովի խնդիրն է հանդիսանում պաշտպանողի տեսական պատրաստվածության մակարդակի որոշումը, նրա պատրաստվածությունը պրոֆեսիոնալ գործունեություն վարելուն, ինչպես նաև պաշտպանողին համապատասխան որակավորման վկայական տրամադրելու վերաբերյալ որոշման կայացումը: Այդ պատճառով պաշտպանության ժամանակ պաշտպանողի խնդիրն է հանդիսանում վերապատմել ոչ թե այն, թե ինչ է գրված գրականությունում, այլ այն, թե ինչ է կատարվել պաշտպանողի կողմից խնդիրն ուսումնասիրելու ժամանակ:

Պաշտպանողը, ավարտական աշխատանքի ղեկավարի կողմից, ներքին գրախոսողի գրախոսման վերաբերյալ ստանալով դրական արձագանք և ստանալով թույլտվություն պաշտպանության համար, պետք է պատրաստի հաշվետվություն (7-10 ընթացք), որում հստակ և կրճատ շարադրվում են ավարտական աշխատանքի հիմնական դրույթները, ընդ որում պարտադիր է ցուցադրական նյութերի (տեսասալիկների (սլայդերի (առնվազն 10)) պատրաստումը, որը ևս հաստատվում է աշխատանքի ղեկավարի հետ: Կրճատ հաշվետվությունը կարող է կատարվել գրավոր ձևով, սակայն պաշտպանության ժամանակ անհրաժեշտ է աշխատանքը ներկայացնել ազատ, «սեփական բառերով», սակայն չշեղվելով թեմայից և չկարդալով տեքստը:



Ավարտական աշխատանքի պաշտպանության նախապատրաստումն իրենից ներկայացնում է կարևոր և պատասխանատու աշխատանք: Կարևոր է ոչ միայն գրել բարձր որակի աշխատանք, այլև կարողանալ այն պաշտպանել բարձր մակարդակով: Հաջող պաշտպանության համար անհրաժեշտ է լավ պատրաստել հաշվետվությունը: Վերջինում անհրաժեշտ է նշել, թե ինչ է անհատապես կատարվել ուսանողի կողմից, ինչով է ղեկավարվել թեման ուսումնասիրելու ժամանակ, որն է ուսումնասիրման առարկան, ինչ մեթոդներ են կիրառվել դիտարկվող խնդրի ուսումնասիրման համար, ուսումնասիրության ընթացքում ինչ նոր արդյունքների է հասել և, վերջապես, որոնք են հետազոտությունից բխող հիմնական եզրակացությունները: Սա հաշվետվության ընդհանուր պատկերն էր, ավելի կոնկրետ բովանդակությունը որոշվում է ավարտական աշխատանք կատարողի և աշխատանքի ղեկավարի հետ միասին:

Հաշվետվությունը չպետք է ծանրաբեռնված լինի թվային տվյալներով, դրանք կարող են բերվել միայն այն դեպքում, երբ անհրաժեշտ են այս կամ այն եզրակացությունը պնդելու կամ պատկերելու համար:

Հաշվետվությունը ներկայացնելուց հետո պաշտպանողին հարցեր են ուղղում հանձնաժողովի նախագահը, անդամները և ներկա գտնվողները: Հարցերը կարող են վերաբերվել ավարտական աշխատանքի թեմային, ընդհանուր կամ մասնագիտական դասերին, այդ պատճառով պաշտպանությունից առաջ նպատակահարմար է հիշողության մեջ վերականգնել ամբողջ դասերը և հատկապես այն բաժինները, որոնք ուղղակի կապ ունեն ավարտական աշխատանքի հետ: Պաշտպանողին թույլատրվում է օգտվել ավարտական աշխատանքից: Ըստ հաշվետվության և պատասխանների՝ քննական հանձնաժողովը դատում է պաշտպանողի աշխարհայացքը, բազմակողմանի զարգացվածությունը, հանրության առաջ ելույթ ունենալու և հարցերը պատասխանելու ժամանակ սեփական տեսակետը պատճառաբանելու կարողությունները:

Պաշտպանողի կողմից հարցերին պատասխանելուց հետո հաշվի է առնվում ավարտական աշխատանքի ղեկավարի արձագանքը (առկայության դեպքում), ինչպես նաև շարադրվում են տվյալ աշխատանքի յուրահատկությունները, պաշտպանողի վերաբերմունքն իր պարտականությունների նկատմամբ, նշվում են աշխատանքի դրական և

բացասական կողմերը, նաև հրապարակվում է գրախոսությունը: Այնուհետև վերջնական խոսք է տրվում պաշտպանողին:

Աշխատանքը գնահատվում է 20 բալանի համակարգով, ինչպես նաև նշվում (20, 19, 18-գերազանց, 17,16, 15, 14- լավ, 13, 12, 11, 10, 9, 8-բավարար):

Ավարտական աշխատանքի պաշտպանության արդյունքի գնահատականը որոշվում է քննական հանձնաժողովի փակ նիստում: Գնահատման ժամանակ հաշվի է առնվում թեմայի անհատականությունն ու կիրառական նշանակությունը, աշխատանքի կատարման և ձևավորման որակը, ինչպես նաև հաշվետվության բովանդակությունն ու հարցերին պատասխանելը: Գնահատականը հայտարարվում է բոլոր աշխատանքների պաշտպանումից հետո բաց նիստում: Գնահատականը կարող է բողոքարկվել պաշտպանողի կողմից գնահատականները հայտնելուց անմիջապես հետո: Այդ դեպքում նշանակվում է նոր լսում, որը համալսարանի ընդունած կարգի համաձայն հաստատում է տվյալ մասնագիտության դեկանատը:

**ՀԱՎԵԼՎԱԾ 1**

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

*ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ, ԻՐԱՎՈՒՆՔԻ  
ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՄԲԻՈՆ*

Թույլատրել պաշտպանության  
«ԷԻԿ» ամբիոնի վարիչ՝

Ս. Շ. Ստեփանյան

«.....»

..... 2016թ.

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

*Ուսանող՝ Ազգանուն Անուն*

*Թեմա՝ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՆԱՅՄԱՆ ՀԻՄՆԱՆՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ*

**Ավարտական աշխատանքի կազմը.**

1. Հաշվեքացատրագրային մաս .....
2. Գրաֆիկական մաս .....
3. Թվային տարբերակ .....

Ավարտական աշխատանքի ղեկավար ..... /...../  
*(ստորագրություն)*

Խորհրդատուներ ..... /...../  
*(ստորագրություն)*

..... /...../  
*(ստորագրություն)*

..... /...../  
*(ստորագրություն)*

Ուսանող .....  
*(ստորագրություն)*

«.....».....2016 թ.

**ՀԱՎԵԼՎԱԾ 2**

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ**

Ավարտական աշխատանքի սկիզբը « » \_\_\_\_\_ 2016թ.  
ավարտը « » \_\_\_\_\_ 2016 թ.

Նախաավարտական պրակտիկայի օբյեկտները.....

.....

Ավարտական աշխատանքի հիմնական մասերը (անհրաժեշտ մասերի մշակման  
ցանկը և նրանց կատարման ժամկետները).....

.....

.....

Ավարտական աշխատանքի գրաֆիկական մասի նյութերի ցանկը .....

.....

.....

.....

.....

Ավարտական աշխատանքի թվային տարբերակը.....

.....

.....

Երաշխավորվող մասնագիտական տեղեկատու և այլ գրականություն .....

.....

.....

.....

.....

Ծրագրային փաթեթների կիրառումը ավարտական աշխատանքում.....

.....

Ուսանող .....

(ստորագրություն)

Ղեկավար .....

(ստորագրություն)

## ՀԱՎԵԼՎԱԾ 3

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	1
ԳԼՈՒԽ 1. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՄԱՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	2
1.1 Շինարարական կազմակերպությունների կառավարման էությունն ու առանձնահատկությունները.....	3
1.2 Շինարարական կազմակերպությունների կառուցվածքային առանձնահատկություններն ու գործունեության արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը.....	4
ԳԼՈՒԽ 2. ՀՀ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ.....	5
2.1. ՀՀ շինարարության ոլորտի արդի վիճակի վերլուծությունը.....	6
2.2. ՀՀ շինարարական խոշոր կազմակերպությունների կառավարման կառուցվածքների վերլուծությունը.....	7
ԳԼՈՒԽ 3. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ.....	8
3.1. Շինարարական կազմակերպությունների կառավարման միջազգային փորձի տեղայնացման հնարավորությունները ՀՀ-ում.....	9
3.2. Շինարարության ոլորտի իրավական կարգավորման համակարգն ու դրա բարելավման ուղիները ՀՀ-ում.....	10
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	11
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	12
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ (ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ՄԱՍ).....	13

## ՀԱՎԵԼՎԱԾ 4

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ ԱՎԾ, Ծինարարությունը ՀՀ-ում armstat.am
2. ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը, Ծինարարություն, armstat.am
3. ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, armstat.am
4. ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, «Ճգնաժամից դեպի նոր զարգացում» Հայաստանի տնտեսական զեկույց, 2009, 102 էջ
5. ՀՀ կառավարություն, «Քաղաքաշինության բնագավառում շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին», N 774-Ն որոշում, 02.07.2009թ.:
6. ՀՀ օրենք «Քաղաքաշինության մասին»:
7. ՀՀ կառավարություն, «ՀՀ 2014-2025թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր»:
8. Ստեփանյան Ս.Շ., Հովհաննիսյան Վ.Փ., Գրիգորյան Ա.Լ., «Անշարժ Գույքի Էկոնոմիկա և Կառավարում»: Եր., ԵրՃՇՊՀ հրատ., 2007., 297 էջ:
9. Հովհաննիսյան Ա.Ա., «Մենեջմենթի հիմունքներ»: Եր., հեղ. Հրատ., 2015, 616 էջ:
10. Բայադյան Ա.Հ., «Ֆինանսական Վերլուծություն»: Եր., «Լիմուշ», 2008, 300 էջ
11. Էվինյան Շ.Դ., «Ձեռնարկության Էկոնոմիկա»: Եր., «Տնտեսագետ», 2007, 513 էջ
12. Գրիգորյան Ռ.Լ., «Ռիսկի Կառավարում»: Եր., ԵրՃՇՊՀ հրատ., 2010, 234 էջ
13. Խաչատուրյան Կ.Է., Աղամյան Ա.Ռ., Բաղեյան Ս.Ա., «Քաղաքաշինական Գործունեության Իրավական Կարգավորումը ՀՀ-ում»: Եր., ԵրՃՇՊՀ հրատ., 2009, 124 էջ
14. Վանյան Ի.Ղ., «Քաղաքային համայնքների զարգացման ռազմավարական պլանավորում և կառավարում»: Եր., ԵրՃՇՊՀ հրատ., 2009, 73 էջ
15. Շոխազարով Ա.Ա., «Ռիսկերի Գնահատման ԵՎ Կառավարման Հիմնախնդիրները ՀՀ Ծինարարության Հատվածում»: Եր., 2015, 176 էջ
16. Մովսիսյան Է.Ա., «Ձեռնարկատիրական Միջավայրի Գնահատումը ՀՀ Ծինարարության Ոլորտում»: Եր., 2014,
17. Ավետիսյան Ա., «Շուկայի Իրավիճակի և Ձեռնարկությունների Հարմարվողականության Հիմնախնդիրները / ՀՀ շին. Կազմակերպությունների օրինակով/»: Եր., 2011